ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 203-Ա

ՀՐԱՄԱՆ

«03» մարտի 2025թ.

ԼԻԼԻԹ ՂԱԼԱԿՉՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ (ՊԱՇՏՈՆԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ 94-31.1-Մ2-4) ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ կետը, ինչպես նաև 2025 թվականի փետրվարի 26-ի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված արտաքին մրցույթի հարցազրույցի մրցութային հանձնաժողովի եզրակացությունն ու Լիլիթ Ղալակչյանի անձնական դիմումը

հրամայում եմ՝

1. Լիլիթ Ղալակչյանին 2025 թվականի մարտի 3-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիրը՝ 94-31.1-Մ2-4) պաշտոնին՝ 9 ամիս փորձաշրջանով:

2. Փորձաշրջանի համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Յուրա Մուշեղյանին:

Փորձաշրջանը համակարգող Յուրա Մուշեղյանին՝ առաջնորդվել առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածով:

3. Լիլիթ Ղալակչյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2025-03-03 15:00:51 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
ք. Գավառ